**Արձանագրություն N 2**
**Առողջ ապրելակերպի ապրանքանիշի ձևավորման (բրենդինգ) խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԽԾՁԲ-2026/30» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Լենա Նանուշյան |
| Հանձնաժողովի անդամներ | Սերգեյ Աբրահամյան, Մարիամ Մնացականյան, Գայանե Բալայան, Լիլիա Չախոյան, Զարուհի Գրիգորյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Արմինե Գալուստյան |

**1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին**

---

**(Լ. Նանուշյան)**

Ընդունել ի գիտություն, որ 12.03.2026թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2026 թվականի մարտի 20, ժամը 10:00-ն:

2025 թվականի օգոստոսի 27-ին ժամը 17:30-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության հասցե, հեռախոս, էլ. Հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ | Ք. Երևան, Նալբանդյան 7/1, 095 95 96 96 info@dominoproduction.am | 02249552 |
| 2 | «Դիիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ | ք. Երևան, Սոսեի փ. 6, բն. 2, 011 54 72 11, deem@deemcommunications.com | 02582832 |
| 3 | «Պրոդիջի» ՍՊԸ | Ք.Երևան, Անաստաս Միկոյան 2/2, 044 22 42 26, info@prodigi.am | 01278077 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:**

**2. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

**(Լ. Նանուշյան)**

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:**

**3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին,**

---

**(Լ. Նանուշյան)**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են անհապատասխանություններ, որոնց մասին ARMEPS համակարգով 03.04.2026թ ծանուցվել է՝ շտկելու արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝

***«Պրոդիջի» ՍՊԸ***

➢ *Բացակայում է Նախնական հայեցակարգի առաջարկը անհրաժեշտ է ներկայացնել հայեցակարգը հրավերի պահանջներին համապատասխան:*

➢ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշ

Բացակայում են Հավելված 1.1-ով ներկայացված մասնագիտական փորձառությունը չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրիկատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

Հրավերով պահանջվել է ներկայացնել Առնվազն երեք լայնածավալ սոցիալական պատասխանատվության գովազդային արշավների իրականացման փորձ՝ ապացուցված արդյունքներով և պատվիրատուների հանձնարարականներով, հայտում բացակայում է նշված չափոփոշիչի համապատասխանությունը հիմնավորող պայմանագրերը և դրանց պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը:

➢ Հրավերի Հավելված N 1.2 և հրավերով պահանջվող «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր.

Բացակայում են աշխատակազմում ներառված բոլոր մասնագետների գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև ինքնակենսագրականները անհրաժեշտ է ներկայացնել հայերեն լեզվով:

➢ Գնային առաջարկը ներկայացվել է մեկ ընդհանուր թվով, անհրաժեշտ է ներկայացնել նաև գնային առաջարկի բացվածքը՝ մասնակցի գինը բաղադրիչներով բաժանված (անվանում, լոգո, ֆիրմային ոճ, Բրենդի մեկնարկի միջոցառման կազմակերպում, Ստեղծագործական կոնցեպտների, սցենարների մշակում և այլն):

Հաշվի առնելով վերոնշյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով՝ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և առաջարկվում է շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Շտկված փաստաթղթերը մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 06.04.2026թ ներառյալ, անհրաժեշտ է ներկայացնել armine.galustyan@moh.am և lilia.chakhoyan@moh.am էլեկտրոնային փոստով:

Հեռախոս՝ 060 80-80-03 (1702), 091 82 82 09»

**«Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ**

Հայտնում եմ, որ Ձեր կողմից ներկայացված հայտում ՀՀ ԱՆ ԳՀԽԾՁԲ-2026/31 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

➢ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշ

Հրավերով պահանջվել է ներկայացնել Առնվազն երեք լայնածավալ սոցիալական պատասխանատվության գովազդային արշավների իրականացման փորձ՝ ապացուցված

արդյունքներով և պատվիրատուների հանձնարարականներով, հայտում բացակայում է նշված չափորոշիչի համապատասխանությունը հիմնավորող պայմանագրերը և դրանց պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը:

➢ Գնային առաջարկը ներկայացվել է մեկ ընդհանուր թվով, ինչպես նաև կցվել է գնային առաջարկի բացվածքը՝ մասնակցի գինը բաղադրիչներով բաժանված, սակայն բրենդի մեկնարկի միջոցառման կազմակերպման հաշվարկը ներկայացված չէ: Հարկ եմ համարում նշել, որ ծառայությունները մատուցվելու են Հրավերի տեխնիկական բնութագրին համապատասխան՝ գնային առաջարկով ներկայացված վերջնական գնով:

Հաշվի առնելով վերոնշյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով՝ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և առաջարկվում է շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Շտկված փաստաթղթերը մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 06.04.2026թ ներառյալ, անհրաժեշտ է ներկայացնել armine.galustyan@moh.am և lilia.chakhoyan@moh.am էլեկտրոնային փոստով:

Հեռախոս՝ 060 80-80-03 (1702), 091 82 82 09

**«Դիիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ**

Հայտնում եմ, որ Ձեր կողմից ներկայացված հայտում ՀՀ ԱՆ ԳՀԽԾՁԲ-2026/31 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

➢ Հայտը, այդ թվում նաև գնային առաջարկը, ներկայացված է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 31-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ անհրաժեշտ է շտկել և ներկայացնել էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված:

➢ Նախնական հայեցակարգի առաջարկում անհրաժեշտ է հստակեցնել ժամանակացույցի փուլերը իրականացվելու են զուգահեռ թե մի փուլի սկիզբը սկսվելու է նախորդ փուլի ավարտից հետո:

➢ **«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշ**

«Դիիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ և UNDP կնքված պայմանագիր՝ անհրաժեշտ է ներկայացնել Հատուկ պայմանները և Տեխնիկական առաջադրանքը հայերեն լեզվով, ինչպես նաև պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթեր (հանձնման-ընդունման արձանագրություն և/կամ ծառայությունն ընդունած կողմի գրավոր հավաստում),

«Դիիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ և Կարմիր Խաչի միջազգային կոմիտե (ԿԽՄԿ) անհրաժեշտ է ներկայացնել Տեխնիկական առաջադրանքը հայերեն լեզվով, ինչպես նաև պատշաճ կատարումը

հավաստող փաստաթղթեր (հանձնման-ընդունման արձանագրություն և/կամ ծառայությունն ընդունած կողմի գրավոր հավաստում),

«Դիիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ և «Նորք» տեխնոլոգիաների կենտրոն՝ անհրաժեշտ է ներկայացնել Հատուկ պայմանները և Տեխնիկական առաջադրանքը հայերեն լեզվով,

«Դիիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ և EU Armenia՝ անհրաժեշտ է ներկայացնել Հատուկ պայմանները և Տեխնիկական առաջադրանքը հայերեն լեզվով, ինչպես նաև պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթեր (հանձնման-ընդունման արձանագրություն և/կամ ծառայությունն ընդունած կողմի գրավոր հավաստում),

«Դիիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ և Երևանի քաղաքապետարան՝ անհրաժեշտ է ներկայացնել Հատուկ պայմանները և Տեխնիկական առաջադրանքը հայերեն լեզվով, ինչպես նաև պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթեր (հանձնման-ընդունման արձանագրություն և/կամ ծառայությունն ընդունած կողմի գրավոր հավաստում),

➢Հրավերի Հավելված N 1.2 և հրավերով պահանջվող «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր.

Բացակայում են «Կոպիռայթեր», «Արվեստի ղեկավար» և «Թվային խթանման մասնագետ» CV-ները, ինչպես նաև աշխատակազմում ներառված բոլոր մասնագետների գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին:

➢Գնային առաջարկը ներկայացվել է մեկ ընդհանուր թվով, անհրաժեշտ է ներկայացնել նաև գնային առաջարկի բացվածքը՝ մասնակցի գինը բաղադրիչներով բաժանված (անվանում, լոգո, ֆիրմային ոճ, Բրենդի մեկնարկի միջոցառման կազմակերպում, Ստեղծագործական կոնցեպտների, սցենարների մշակում և այլն):

Հաշվի առնելով վերոնշյալը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով՝ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և առաջարկվում է շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Շտկված փաստաթղթերը մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 06.04.2026թ ներառյալ, անհրաժեշտ է ներկայացնել armine.galustyan@moh.am և lilia.chakhoyan@moh.am էլեկտրոնային փոստով:

Հեռախոս՝ 060 80-80-03 (1702), 091 82 82 09

**«Դիիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ**

Հայտնում եմ, որ Ձեր կողմից ներկայացված հայտում ՀՀ ԱՆ ԳՀԽԾՁԲ-2026/31 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

➢ Հայտը, այդ թվում նաև գնային առաջարկը, ներկայացված է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 31-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ անհրաժեշտ է շտկել և ներկայացնել էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված:

➢ Նախնական հայեցակարգի առաջարկում անհրաժեշտ է հստակեցնել ժամանակացույցի փուլերը իրականացվելու են զուգահեռ թե մի փուլի սկիզբը սկսվելու է նախորդ փուլի ավարտից հետո:

➢ **«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշ**

«Դիիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ և UNDP կնքված պայմանագիր՝ անհրաժեշտ է ներկայացնել Հատուկ պայմանները և Տեխնիկական առաջադրանքը հայերեն լեզվով, ինչպես նաև պայմանագրի կատարումը հավաստող փաստաթղթեր (հանձնման-ընդունման արձանագրություն և/կամ ծառայությունն ընդունած կողմի գրավոր հավաստում),

«Դիիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ և Կարմիր Խաչի միջազգային կոմիտե (ԿԽՄԿ) անհրաժեշտ է ներկայացնել Տեխնիկական առաջադրանքը հայերեն լեզվով, ինչպես նաև պայմանագրի կատարումը հավաստող փաստաթղթեր (հանձնման-ընդունման արձանագրություն և/կամ ծառայությունն ընդունած կողմի գրավոր հավաստում),

«Դիիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ և «Նորք» տեխնոլոգիաների կենտրոն՝ անհրաժեշտ է ներկայացնել Հատուկ պայմանները և Տեխնիկական առաջադրանքը հայերեն լեզվով,

«Դիիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ և EU Armenia՝ անհրաժեշտ է ներկայացնել Հատուկ պայմանները և Տեխնիկական առաջադրանքը հայերեն լեզվով, ինչպես նաև պայմանագրի կատարումը հավաստող փաստաթղթեր (հանձնման-ընդունման արձանագրություն և/կամ ծառայությունն ընդունած կողմի գրավոր հավաստում),

«Դիիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ և Երևանի քաղաքապետարան՝ անհրաժեշտ է ներկայացնել Հատուկ պայմանները և Տեխնիկական առաջադրանքը հայերեն լեզվով, ինչպես նաև պայմանագրի կատարումը հավաստող փաստաթղթեր (հանձնման-ընդունման արձանագրություն և/կամ ծառայությունն ընդունած կողմի գրավոր հավաստում),

➢ Հրավերի Հավելված N 1.2 և հրավերով պահանջվող «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր.

Բացակայում են «Կոպիռայթեր», «Արվեստի ղեկավար» և «Թվային խթանման մասնագետ» CV-ները, ինչպես նաև աշխատակազմում ներառված բոլոր մասնագետների գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին:

➢ Գնային առաջարկը ներկայացվել է մեկ ընդհանուր թվով, անհրաժեշտ է ներկայացնել նաև գնային առաջարկի բացվածքը՝ մասնակցի գինը բաղադրիչներով բաժանված (անվանում, լոգո, ֆիրմային ոճ, Բրենդի մեկնարկի միջոցառման կազմակերպում, Ստեղծագործական կոնցեպտների, սցենարների մշակում և այլն):

Հաշվի առնելով վերոնշյալը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով՝ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և առաջարկվում է շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

*Շտկված փաստաթղթերը մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 06.04.2026թ ներառյալ, անհրաժեշտ է ներկայացնել armine.galustyan@moh.am և lilia.chakhoyan@moh.am էլեկտրոնային փոստով:*

*Հեռախոս՝ 060 80-80-03 (1702), 091 82 82 09*

**03.04.2026թ.**

**Հանձնաժողովը որոշեց՝**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 41-րդ կետով՝ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել մասնակիցներին՝ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6 դեմ՝ 0:***

**Ընդունել ի գիտություն՝**

Մասնակիցները սահմանված ժամկետում՝ 06.04.2026թ. ներկայացրել են պահանջվող փաստաթղթերը:

## *4. Մասնակիցների առաջարկած գների մասին*

---

***(Լ. Նանուշյան)***

Ստորև ներկայացվում են մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները

Գնման գին չի սահմանվել. Գնման ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա

| *Հ/հ* | *գնման առարկայի անվանումը* | *մասնակիցների անվանումը* | *մասնակիցների գնային առաջարկները* | | |
|---|---|---|---|---|---|
| | | | *առանց ԱԱՀ* | *ԱԱՀ* | *ընդհանուր* |
| *1* | *Առողջ ապրելակերպի ապրանքանիշի ձևավորման (բրենդինգ) ծառայություններ* | *«Դիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ* | *12,500,000* | *2,500,000* | *15,000,000* |
| | | *«Պրոդիջի» ՍՊԸ* | *26,416,666* | *5,283,333* | *31,700,000* |
| | | *«Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ* | *29,800,000* | *5,960,000* | *35,760,000* |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:***

## *5. Ընտրված մասնակիցներ որոշելու մասին*

---

***(Լ. Նանուշյան)***

***09.04.2026թ.***

***Հանձնաժողովը որոշեց՝***

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ ընտրված մասնակից ճանաչել «Դիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ-ն:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *6. Ընթացակարգի ամփոփման մասին*

---

*(Լ. Նանուշյան)*

Հիմք ընդունելով Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԽԾՁԲ-2026/30» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտին հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պայմանագիր կնքելու ծանուցում ուղարկել «Դիիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ-ին 15,000,000 ՀՀ դրամ պայմանագրային գնով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:***

***Հանձնաժողովի***

| | | |
|---|---|---|
| *նախագահ՝* | | *Լ. Նանուշյան* |
| *անդամներ՝* | | *Ս. Աբրահամյան* |
| | | *Մ. Մնացականյան* |
| | | *Գ. Բալայան* |
| | | *Լ. Չախոյան* |
| | | *Ջ. Գրիգորյան* |
| *քարտուղար՝* | | *Ա. Գալուստյան* |